ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-8

ք. Իջևան 01.04.2022թ.

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Պ. Ասլիբեկյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Սանթրոսյան, Ա. Բարսեղյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին/Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցերի հաստատման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. Հաղորդում 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
4. Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/ :

5. Ընթացիկ հարցեր

5.1. 2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի Հեռակա ուսուցման ավարտական կուրսերում վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների բաշխված ցուցակը ըստ ղեկավարների և ուսանողների հաստատման մասին/ /Զեկ. Գ. Ավետիսյան/:

5.2 2021-2022 ուստարվա ֆակուլտետի առաջին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման լուծարքային շրջանի ամփոփման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 1/1 ¬

Հաստատել նիստի օրակարգը

1. ***Լսեցին.- Հաղորդում առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:***

Մ. Միքայելյանը հաղորդեց, որ ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հարցերը քննարկվել են ամբիոնում: Դասախոսներին և չորրորդ/առկա/ և հինգերորդ /հեռակա/ կուրսի ուսանողներին հանձնարարվել է առաջնորդվել «ԵՊՀ Իջևանի մաս-նաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ»-ով (25.12.2020թ., ամբիոնի նիստի 48/6 որոշում):

Ավարտական աշխատանքի ղեկավարները ամբիոնում հաստատված գրաֆիկի համաձայն խորհրդատվություն են իրականացրել ուսանողների հետ: Խորհրդատվության արդյունքում.

- ճշգրտվել են ավարտական աշխատանքների կառուցվածքը և պլանը, կատարման ժամկետները,
- առաջարկվել է գրականության ցանկ,
- կատարվել է տեսական նյութերի վերլուծություն և ամփոփում, գրականության վերլուծություն և նախնական տարբերակի ներկայացում ղեկավարին:

Ընդհանուր առմամբ առկա ուսուցման համակարգում խնդիրներ չկան /առանձին ուսանողներ ժամկետները խախտել են, բայց դրանք մտահոգող չեն/:

Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողները ստացել են իրենց թեմաները, սակայն ոչ բոլոր ուսանողներն են հանդիպել ղեկավարների հետ: Որոշ ուսանողներ ղեկավարների հետ լիարժեք չեն աշխատում:

Գ. Հովյաննիսյանը հաղորդեց, որ առկա ուսուցման ուսանողների հիմնական մասի մոտ աշխատանքներն 80 %-ով պատրաստ են: Ուսանողներն առաջնորդվում են ըստ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի: Այժմ իրականացնում են ավարտական աշխատանքների տեխնիկական շտկումները:

Հեռակա ուսուցման ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ: Տրվել են ավարտական աշխատանքների բովանդակությունները, գրականության ցանկերը: Երեք ուսանող 80 %-ով պատրաստել են իրենց աշխատանքները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.- Հաղորդումն առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.- Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցերի հաստատման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ ուսանողի կողմից բակալավրի կրթական ծրագրի ելքային արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Հաջողված ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության իրականացման համար կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու և շտկելու առկա բացթողումները: Ելնելով վերոնշյալից՝ ներկայացնում եմ 2021-2022 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության և նախապաշտպանության գրաֆիկները.

	Ֆինանսներ		Զբոսաշրջություն	
	առկա	հեռակա	առկա	հեռակա
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	27.05.2022	24.06.2022 25.06.2022	21.05.2022	25.06.2022
Ավարտական աշխատանքի նախապաշտպանություն	04.05.2022	02.06.2022	30.04.2022	04.06.2022
Ավարտական աշխատանքի հանձնում ամբիոն	մինչև 30.04.2022	մինչև 31.05.2022	մինչև 28.04.2022	մինչև 31.05.2022
Ավարտական աշխատանքի ամբիոնային ստուգում	20.04.2022	05.05.2022	16.04.2022	07.05.2022

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ 2021-2022 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության գրաֆիկներին և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3. Լսեցին.- Հաղորդում 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին, մասնավորապես նշելով, II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում է կազմակերպել ս/թ ապրիլի 5-9 ընկած ժամանակահատվածում: Համապատասխան ամբիոնները նախապես ուսումնասիրել են դասընթացների իրականացման կատարողականը, հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել են տոմսերը, թեստերի նմուշները: Կազմվել է նաև ժամանակացույցերը /կցվում է/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաստատել II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերը:

Որոշեցին. - Հաղորդումը II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

4. Լսեցին. - Հաղորդում ամբիոններում II կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին /Զեկ. Մ. Միքայելյան,Գ. Հովհաննիսյան/

Մ. Միքայելյանը նշեց, որ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում դասընթացներից մեծ մասի փաթեթները առկա են, մի քանի դասընթացներ կան, որոնց փաթեթները ընթացքի մեջ են:

ԿԲ հրավիրված նոր դասախոսները հիմք են ընդունում նախորդ տարվա համապատասխան դասընթացների փաթեթները՝ ընթացքում իրականացնելով վերանայում:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ զբոսաշրջություն ամբիոնում դասընթացների փաթեթները գրեթե բոլոր դասընթացների գծով առկա են: Սակայն հավելեց, որ դասընթացների ծրագրերը հաճախ լինում են առավել կիրառելի, քան դասընթացների փաթեթները: Նա նշեց, որ դասընթացի փաթեթի դետալացումը բավականին բարդ է, իսկ գրագետ կազմված դասընթացի ծրագիրը ներառում է այն բոլոր գործընթացները, որոնք անհրաժեշտ են իրականցնել դասընթացի շրջանակներում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը ամբիոններում II կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր.

5.1. Լսեցին. -2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի Հեռակա ուսուցման ավարտական կուրսերում վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների բաշխված ցուցակը ըստ ղեկավարների և ուսանողների հաստատման մասին/ /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ 2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի Հեռակա ուսուցման ավարտական կուրսերում ունենք վերականգնված 5 ուսանողներ, որոնք ավարտել են տեսական կուրսը և մասնակցելու են միայն ամփոփիչ ատեստավորմանը: Մասնագիտական ամբիոնը նիստում քննարկել և ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացրել ավարտական աշխատանքների թեմաների բաշխված ցուցակը ըստ ղեկավարների և ուսանողների/ Բաշխված ցուցակը կցվում է/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.- Հաստատել 2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի Հեռակա ուսուցման ավարտական կուրսերում վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների բաշխված ցուցակը ըստ ղեկավարների և ուսանողների:

5.2. Լսեցին.- 2021-2022 ուստարվա ֆակուլտետի առաջին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման լուծարքային շրջանի ամփոփման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Դեկանի պաշտոնակարը հաղորդեց, որ տնտեսագիտության ֆակուլտետում 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 132 ուսանող առկա ուսուցմամբ և 171 ուսանող՝ հեռակա: «Ֆինանսներ» կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 75, հեռակա ուսուցմամբ 99 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 57 և հեռակա ուսուցմամբ 72 ուսանող: Անբավարար գնահատականներ ստացել են առկա ուսուցման 49ուսանող, որից «Ֆինանսներ» ԿԾ 30, «Զբոսաշրջություն» ԿԾ 19 ուսանող: Երկրորդ լուծարքային շրջան են անցել առկա ուսուցման 11 ուսանող: Լուծարքային շրջանի ամփոման արդյունքում առկա ուսուցման 1 և հեռակա ուսուցման 12 ուսանող ներկայացվել են հեռացման, ինչպես նաև հեռակա ուսուցման 21 ուսանող կուտակել են մինչև 12 կրեդիտ պարտքեր: Լուծարքային շրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետներում: Գրավոր բողոք չի արձանագրվել:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - 2021-2022 ուստարվա ֆակուլտետի առաջին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման լուծարքային շրջանի ամփոփման մասին հաղորդումն ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*